



Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2018 թվականի մարտի 19-ի
N 37 -Ա որոշման

«Ա պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային ՀԱՅՏ

Ծրագրի անվանումը	Գյումրի քաղաքի «Մուշ 2/2» թաղամասի հրապարակի կազմակերպում և բարեկարգում
Մարզ	Շիրակ
Համայնքը /համայնքները	ք. Գյումրի
Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից	125կմ
Սահմանամերձ , բարձր լեռնային համայնք	
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	<p>Գյումրի քաղաքի «Մուշ» թաղամասը նորաստեղծ և ծայրամասային թաղամաս է: Այն գտնվում է քաղաքի կենտրոնից 5-6կմ հեռավորության վրա: Թաղամասում կա 3500 բնակարան, որտեղ ապրում են շուրջ 13000 բնակիչ: Թաղամասում գործում է 1 միջնակարգ դպրոց և Գյումրու ֆուտբոլի ակադեմիան:</p> <p>Հրապարակի համար նախանշված տարածքը շրջապատված է բնակելի շենքերով և գտնվում է հողաշերտով և քարակույտերով ծածկված անմխիթար վիճակում:</p> <p>Այս հատվածը միակն է թաղամասում, որտեղ կարելի է կատարել ներդրումներ, կառուցել հասարակական նշանակության օբյեկտներ, աշխուժացնել տնտեսական կյանքը: Սակայն տարածքի անբարեկարգ վիճակով պայմանավորված պոտենցիալ ներդրողների մոտ չկա ցանկություն և շահագրգռվածություն տվյալ հատվածում գումարներ ներդնելու համար:</p> <p>Թաղամասում չկա ժամանցի, զվարճանքի և հանգստի կազմակերպման ոչ մի վայր: Բնակիչները գրկված են թաղամասում զբոսնելու, հանգստանալու, զվարճանալու հնարավորություններից:</p> <p>Թաղամասում հնարավոր չէ կազմակերպել մշակութային բացօթյա միջոցառումներ:</p>
Ծրագրի իրականացման նպատակը	Մույն ծրագիրը հանդիսանում է Գյումրի քաղաքի տնտեսական զարգացման ծրագրերի բաղադրիչներից մեկը: Գյումրիում իրականացվում է քաղաքի հավասարաչափ տնտեսական զարգացման քաղաքականություն, որի վկայությունն է սույն ծրագիրը: Ծրագրով կառուցվելու է թաղամասի հրապարակը, բարեկարգվելու և կանաչապատվելու է տարածքը, տեղադրվելու են շատրվաններ, առանձնացվելու են հրապարակին հարող առաջնային գծում գտնվող հասարակական նշանակության հողակտորներ, որոնց ընդհանուր



մակերեսը կազմելու է 10850 քառ. մ:

Ծրագրի իրականացման արդյունքում քարքարոտ և անհրապույր վայրը պոտենցիալ ներդրողների համար դառնալու է պահանջված և գրավիչ:

Համայնքում և հատկապես թաղամասում տնտեսական զարգացում ապահովելու նպատակով, բարեկարգման հետևանքով առանձնացված հասարակական նշանակության հողակտորները կօտարվեն առևտրի, սպասարկման, ժամանցի և զվարճանքի վայրեր կառուցելու ցանկություն ունեցող ձեռներեցներին:

Հրապարակին կից կառուցվելու է եկեղեցի, որի համար Հայ Առաքելական եկեղեցուն է տրամադրվել 4570 քառ. մ հողատարածք:

Ծրագիրն իրականացվելու է 28000 քառ. մ տարածքի վրա:


Ծրագիրը միտված է Գյումրի նորակառույց և ծայրամասային «Մուշ» թաղամասում խթանել տնտեսական զարգացումը և պատշաճ կերպով ու տեսքով թաղամասը հաղորդակից դարձնելու արդեն իսկ գոյություն ունեցող տեսքով, ենթակառուցվածքներով, բարեկարգվածության մակարդակով և այլն, քաղաքի կենտրոնական հատվածին:

Հրապարակը կհանդիսանա թաղամասի փողոցները իրար կապող ճանապարհային կարևորագույն հանգույց:

Հրապարակի կառուցումով կամբողջացվի թաղամասի քաղաքաշինական և ճարտարապետական տեսքը:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում

Հրապարակը կառուցվելու է Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողակտորի վրա և ծրագրի ավարտին համայնքը ունենալու է նախագծանախահաշվային փաստաթղթերի արժեքով հրապարակ:



Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին

Ծրագրի ավարտին կունենանք բարեկարգված և կանաչապատված շուրջ 28000 քառ. մ նորաճ հրապարակ, մասնավորապես

1. Հասարակական կառուցապատմամբ տարածք- 10850 քառ. մ
2. Կանաչապատ տարածք- 1450 քառ. մ
3. Ջրավազան- 80 քառ. մ
4. Սալիկապատ տարածք- 5029 քառ. մ
5. Խճապատ տարածք- 6900 քառ. մ

Կատեղծվեն պայմաններ, որոնց արդյունքում ձեռնարկատերերը հնարավորություն կունենան կառուցելու խանութներ, առևտրի կենտրոններ, ծառայությունների մատուցման կետեր, զվարճանքի և ժամանցի վայրեր:

Հնարավորություններ կստեղծվեն ժամանակավոր տաղավարներ տեղադրելու և բացօթյա առևտուր կազմակերպելու համար:

Վերը նշվածի արդյունքում կստեղծվեն տասնյակ աշխատատեղեր, որոնք խիստ կարևոր են գործազրկության բարձր մակարդակ ունեցող քաղաքի համար:

Այս ամենը իր դրական ազդեցությունը կունենան քաղաքի տնտեսական զարգացման և բնակչության սոցիալ տնտեսական մակարդակի բարձրացման վրա:

Հրապարակը կլինի թաղամասի բնակիչների համար հանգստի

	<p>կազմակերպման միակ վայրը: Կընձեռի հնարավորություն բացօթյա միջոցառումներ կազմակերպելու համար:</p>
<p>Ծրագրի յուրաքանչյուր արդյունքի հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները</p>	<ol style="list-style-type: none"> 1. Գնումների գործընթացի կազմակերպում 2. Արդյունքների ամփոփում, պայմանագրերի կնքում 3. Աշխատանքների իրականացում և ֆինանսավորում ըստ փուլերի 4. Վերահսկողություն, նախորդ փուլի աշխատանքների ընդունում
<p>Ծրագրի ազդեցությունը շահառուների վրա</p>	<p>Ծրագրի շահառուներն են քաղաքի և հատկապես թաղամասի բնակիչները: Թաղամասում ապրում են շուրջ 13000 բնակիչ:</p> <p>Ստեղծված պայմանների, որոնք կառաջանան ծրագրի իրականացման արդյունքում և կատարված ներդրումների շնորհիվ կառուցված հասարակական կառույցներում՝ առևտրի կենտրոններ, զվարճանքի վայրեր և այլն, կատեղծվեն թփուր աշխատատեղեր և թաղամասի բնակիչներից շատերը կգտնեն իրենց հարմար աշխատանք, որի արդյունքում կբարձրանա բնակիչների զբաղվածության մակարդակը:</p> <p>Բնակիչները, հատկապես երեկոյան ժամերին, կարող են իրենց հանգիստը և զբոսանքը կազմակերպել տվյալ հրապարակում, չկատարելով հավելյալ ծախս քաղաքի կենտրոնական հատվածների հանգստի վայրեր հասնելու համար:</p> <p>Հրապարակի կառուցումով կստեղծվի ևս մի վայր, որտեղ նախատեսվում է տեղադրել խաղահրապարակ՝ երեխաների մանկությունը ավելի հետաքրքիր և հիշարժան դարձնելու համար:</p> <p>Թաղամասի կենտրոնի հողոտ, փոշոտ, քարուքանդ հատվածը կվերածվի կանաչապատ, շատրվաններով, նորաճ հրապարակի, որը հետագայում կշրջապատվի ճարտարապետական գեղեցիկ լուծումներով կառուցված հասարակական նշանակության շենքերով:</p>
<p>Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր</p>	<p>Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի մոտ 70-80 ժամանակավոր աշխատատեղ /շինարարություն, կառուցապատում, բարեկարգում/ իրականացողներ, իսկ ծրագրի ավարտից և հասարակական կառուցապատման տարածքների օտարումից հետո կստեղծվեն և ժամանակավոր և հիմնական աշխատատեղեր:</p>
<p>Ծրագրի սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքները</p>	<p>Թաղամասը կունենա նորաճ հրապարակ, որտեղ կանցկացվեն քաղաքային միջոցառումներ, բնակիչները կունենան հնարավորություն կազմակերպելու իրենց հանգիստը անմիջապես թաղամասում և ոչ թե քաղաքի կենտրոնական հատվածներում:</p> <p>Անհատ ձեռներեցներին հնարավորություն կստեղծվի բարեկարգված հատվածում ժամանակավոր տաղավարներ տեղադրելու և գումար վաստակելու համար:</p> <p>Կօտարվեն և կկառուցապատվեն նաև բարեկարգման արդյունքում առանձնացված հասարակական նշանակության հողակտորները, կկառուցվեն խանութներ, առևտրի կենտրոններ, ծառայությունների մատուցման կետեր, զվարճանքի և ժամանցի վայրեր, սպասարկման օբյեկտներ, որտեղ կբացվեն նոնանոր աշխատատեղեր:</p> <p>Հասարակական նշանակության հողերի օտարումից համայնքային բյուջե կմուտքագրվի հավելյալ ֆինանսական միջոցներ, որոնք կօգտագործվեն ի շահ</p>

համայնքի այլ ծրագրերի իրականացման համար:

Համայնքի 2017 թվականի բյուջեն և բյուջեի կատարողականը

	Պլան	Ծախսեր
Վարչական	3 089 058 948	2 979 851 253
Ֆոնդային	249 558 300	205 132 498

2017 թ. Գյումրի համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

		Պլան	Ծախսեր
- Շենքերի և շինությունների կառուցում	5112	1740000	1479000
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	203583300	177423278
- Տրանսպորտային սարքավորումներ	5121	10000000	0
- Վարչական սարքավորումներ	5122	15800000	14117040
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	13135000	8888180
- Աճեցվող ակտիվներ	5131	2000000	1920000
- Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	750000	750000
-	5134		
Նախագծահետազոտական ծախսեր		2550000	555000

Համայնքի 2018 թվականի բյուջեն

3357033700 ՀՀ դրամ

Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի պլանավորված ծախսերը

Վարչական	3187370200
Ֆոնդային	242770300

2018 թ. Գյումրի համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

		Պլան
- Շենքերի և շինությունների կառուցում	5112	1740000
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	195835300
- Վարչական սարքավորումներ	5122	6450000
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	35375000
- Աճեցվող ակտիվներ	5131	2120000
- Նախագծահետազոտական ծախսեր	5134	1250000

Գյումրի համայնքի ֆոնդային մուտքերի պլան՝ 73106800

<p>Համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով 2018 թվականի կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարիության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով)</p>	<p>Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի մուտքերի հաշվին սույն ծրագրի իրականացումը հնարավոր չէ: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների շուրջ 98%-ը ուղղվում է համայնքի պարտադիր խնդիրների իրականացմանը:</p> <p>Ֆինանսական միջոցների մնացած մոտ 2%-ն էլ ուղղված է համայնքի կամավոր խնդիրների լուծմանը, որով փորձ է արվում ինչ-որ չափով մեղմելու համայնքի կարիքավոր և սոցիալապես խիստ անապահով բնակչության հոգսերը:</p>
<p>Ծրագրի ընդհանուր բյուջեն</p>	<p>136644974 ՀՀ դրամ (100%)</p>
<p>Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը</p>	<p>95651482 ՀՀ դրամ (70%)</p>
<p>Այլ ներդրողներ</p>	<p>0 ՀՀ դրամ (0 %)</p>
<p>Ծրագրի իրականացման տևողությունը</p>	<p>Ակիգբ <u>հունիս</u> 2018թ. Տևողությունը՝ 7 ամիս</p>
<p>Ծրագրի ծախսերը</p>	<p>Ծրագրի իրականացման համար նախատեսվել է ծախսել 136644974 ՀՀ դրամ, որը հաշվարկվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Նախագծանախահաշվային փաստաթղթերը կցված են:</p>
<p>Ամսաթիվ</p>	<p>“ <u>20</u> ” <u>03</u> 2018թ.</p>

Այլ տեղեկություններ ծրագրի մասին. (Նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու Կարեն Բադալյան
Հեռախոս, էլ. Փոստ /94/ 90-90-41, badalyan.karen74@gmail.com

Սամվել Բալասանյան
Համայնքի ղեկավար
